

ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

HCV վարակի կանխարգելման համար գոյություն չունի վակցինա կամ սպեցիֆիկ իմունոգլոբուլին: Հիվանդության կանխարգելման մեթոդներն են՝

- ✓ արյան, օրգանների և հյուսվածքների դոնորների սկրինինգ
- ✓ ռիսկի խմբի անձանց վարքի մոդիֆիկացիա՝ օրինակ թմրամուլների շրջանում միանվագ ներարկիչների օգտագործումը իջեցրել է նրանց մոտ հեպատիտ C-ով հիվանդացությունը
- ✓ արյան և կենսաբանական հեղուկների նկատմամբ զգույշ վերաբերմունք:

Կանխարգելման հիմնական միջոց է հանդիսանում հիվանդների վաղ հայտնաբերումը և բուժումը:

Վիրուսային հեպատիտ C դրական անձիք պարտավոր են տեղեկացված լինել հիվանդության սեռական և պարենտերալ ճանապարհով տարածման մասին, վիրակապել բոլոր վերքերն ու քերծվածքները, որպեսզի հարուցիչը չընկնի արտաքին միջավայր: Նրանք չեն հանդիսանում արյան, սպերմատոզոիդների, օրգանների, հյուսվածքների դոնոր, չի թույլատրվում ուրիշների հետ համատեղ օգտագործել հիգիենայի պարագաները (ատամի խոզանակ, սափրվելու գործիք, մկրատ և այլն), փոխանցել ուրիշներին այնպիսի անձնական իրեր, որոնք կարող են աղտոտված լինեն իրենց արյունով:

Հետկոնտակտային կանխարգելում

Չկա ոչ մի հայտնի արդյունավետ կանխարգելման միջոց այն անձանց համար, ովքեր ենթարկվել են HCV ՌՆԹ դրական աղբյուրի կենսաբանական հեղուկներով աղտոտմանը: Եթե աղբյուրը HCV ՌՆԹ դրական է կամ անհայտ, վնասված անձի համար խորհուրդ է տրվում հետևյալը՝

- a) Ելակետային (48 ժամվա ընթացքում)՝ հետազոտել հակա-HCVAb
- ▶ եթե հակա-HCVAb բացասական է հետևել կետ b-ին:
 - ▶ եթե հակա-HCV դրական է, կատարել HCV PCR հետազոտություն
 - եթե HCV ՌՆԹ դրական է՝ STOP! մինչ այդ առկա է եղել HCV վարակ:
 - եթե HCV ՌՆԹ բացասական է՝ հետևել կետ b-ին:
- b) 3-6 շաբաթ անց▶ HCV PCR▶ եթե HCV ՌՆԹ բացասական է, վկայում է այն մասին, որ շատ քիչ է վարակման հավանականությունը, 6-րդ ամսին որոշել հակա-HCVAb (կետ c) ▶ եթե HCV ՌՆԹ դրական է, տեղի է ունեցել վարակի փոխանցում, հնարավոր է վարակի ինքնամաքում, հետևել կետ c-ին
- c) Վնասումից 6 ամիս անց
- եթե HCV ՌՆԹ բացասական է եղել 3-6 շաբաթում, որոշել հակա-HCVAb ▶ եթե հակա-HCVAb դրական է, կատարել HCV PCR քանակական, որի դրական արդյունքը վկայում է նոր վարակի մասին, իսկ բացասական արդյունքը՝ վարակի ինքնալավացման:
 - եթե HCV ՌՆԹ դրական է եղել 3-6 շաբաթում, կատարել քանակական HCV PCR հետազոտություն ▶ HCV ՌՆԹ-ն բացասական է, նշանակում է վարակի ինքնալավացում, իսկ եթե HCV ՌՆԹ-ն դրական է, արդեն առկա է քրոնիկ HCV վարակ: